600.0070.15.03.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2017 թվականի №70Ա
ք.Երևան

«ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶԷԿ)» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՅՔԻ ՄԻ ՄԱՍԸ ՎԱՃԱՌԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետը և հաշվի առնելով «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի փետրվարի 27-ի №45 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը «Պատրաս» փակ բաժնետիրական ընկերությանը վաճառելու Հանձնաժողովի 2004 թվականի նոյեմբերի 8-ի №143Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0145 և ջերմային էներգիայի արտադրության №0146 լիցենզիաներով ամրագրված՝ գործունեության իրականացման համար անհրաժեշտ հետևյալ հիմնական գույքը.
   1) շոգետուրբին №1 (մակնիշ՝ ՊՏ-50-130/7, նոմինալ հզորություն՝ 50 ՄՎտ),
   2) գեներատոր №1 (մակնիշ՝ ТВФ-60-2, նոմինալ հզորություն՝ 50 ՄՎտ),
   3) շոգեկաթսա №1 (մակնիշ՝ БКЗ-320, նոմինալ հզորություն՝ 320տ/ժ):
2. Ընկերությանն ընդունել ի գիտություն, որ՝
   1) սույն որոշման 1-ին կետով նշված գործարքն իրականացնելուց հետո անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետում դիմել Հանձնաժողով՝ Ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0145 և

ջերմային էներգիայի արտադրության №0146 լիցենզիաների պայմաններում համապատասխան փոփոխություններ կատարելու համար,

2) իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
15 մարտի 2017թ.
ժամը 16[00]